



EU4Digital



Էլեկտրոնային հմտություններ (eSkills)

Եվրոպական միությունն աջակցում է Արևելյան գործընկեր երկրներում **թվային հմտությունների ռազմավարությունների** իրականացմանը՝ գործելով ի նպաստ թվային աշխատատեղերի ազգային կոալիցիաների, ինչպես նաև փոքր ձեռնարկությունների համար կոմպետենցիաների շրջանակի ստեղծման:

EU4Digital-ի էլեկտրոնային հմտությունների թիմը աջակցում է Արևելյան գործընկեր երկրներում թվային հմտությունների բացի լրացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներին:

Թվային հմտությունները առանցքային խթան են ցանկացած թվային փոխակերպման հաջողության համար: Դրանք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ակտիվ մասնակցություն ունենալ թվային հասարակության մեջ և, նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, նպաստում են տնտեսական աճին: Թվային հմտությունների պահանջարկի շարունակական աճի պայմաններում առաջարկը հաճախ չի բավարարում:



Թվային հմտությունների չափում

Թվային հմտությունների բացերի չափման և կանխատեսման **ընդհանուր մեթոդաբանության** մշակում՝ ԵՄ լավագույն փորձին համահունչ:

Տվյալների հասանելիությունը առանցքային դեր է խաղում **թվային հմտությունների ռազմավարության** մշակման գործում և օգնում է կանխատեսել շուկայի ապագա կարիքները:

Ընդհանուր մոտեցումը հնարավորություն է տալիս համեմատականներ անցկացնել և **համատեղ լուծումներ** գտնել թվային հմտությունների հետ կապված խնդիրների ուղղությամբ:



Թվային հմտությունների և աշխատատեղերի ազգային կոալիցիաներ

Թվային հմտությունների և աշխատատեղերի **ազգային կոալիցիաների** հիմնում:

Բազմաշահառու համագործակցություն, որոնք գործում են թվային հմտությունների զարգացման **վերահսկողության** ու **համակարգման** ուղղությամբ:

Կոալիցիաները միավորում են **շահագրգիռ կողմերին**, ներառյալ ՏՀՏ ընկերություններին, կրթական և վերապատրաստական ծառայություններ մատուցողներին, պետական հատվածին, ԶԿ-ներին ու սոցիալական գործընկերներին:



Թվային հմտությունների կոմպետենցիաների շրջանակ ՓՄՁ-ների համար

Կոմպետենցիաների շրջանակը **հստակ ուղեցույց կծառայի ՓՄՁ-ների համար**՝ անհրաժեշտ թվային հմտություններով աշխատակիցներ գտնելու, վերապատրաստելու և հավաքագրելու նպատակով:

Աջակցում է ՓՄՁ-ների և միկրոբիզնեսների շրջանում **թվային հմտությունների զարգացմանը**, և, հետևաբար, դրանց մրցունակությանը, արտահանման ներուժին և նորարարական կարողություններին:

- ➔ Դասընթացներ և աշխատաժողովներ
- ➔ համաժողովներ և ուսումնական այցեր
- ➔ հատուկ ուշադրություն կանանց և խոցելի խմբերին
- ➔ աջակցություն քաղաքականություն իրականացնողներին և վերապատրաստում անցկացնողներին
- ➔ թվային հմտությունների կարևորության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված տեղեկատվական արշավներ

EU4Digital-ի աջակցությամբ, Արևելյան գործընկեր երկրները առաջիկայում կկարողանան ամբողջությամբ իրացնել իրենց տնտեսական ներուժը՝ փոխկապակցվածությունն ապահովելով աշխատաշուկայում թվային հմտությունների առաջարկի և պահանջարկի միջև, ինչը հետագա տնտեսական զարգացման կարևորագույն հիմնաքարերից մեկն է:

Թվային հմտությունները՝ թվերով



2016-2018 թվականների ընթացքում **ինտերնետ օգտագործող անձանց** ամենաբարձր մասնաբաժինը եղել է

Ադրբեջանում՝ **80%**,
 Բելառուսում՝ **79%**,
 և Մոլդովայում՝ **71%**:

	AM	65%
	AZ	80%
	BY	79%
	GE	63%
	MD	71%
	UA	63%



2018 թվականին **ՏՀՏ հատվածում իգական սեռի շրջանավարտների** ամենաբարձր մասնաբաժինն ունեցել են

Ադրբեջանը՝ **46%**,
 և Հայաստանը՝ **39%**:

	AM	39%
	AZ	46%
	BY	23%
	GE	24%
	MD	23%
	UA	18%



Արևելյան գործընկեր երկրներում **STEM** (Գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) **ծրագրերի շրջանավարտների շրջանում իգական սեռի ներկայացուցիչների մասնաբաժինը** 2018 թվականի դրությամբ մտնում է 20%-ից կայուն ցածր մակարդակում: STEM ծրագրերի իգական սեռի շրջանավարտների ամենաբարձր մասնաբաժինն ունեցել է Վրաստանը, որը կազմել է 16%:

	AM	10%
	AZ	15%
	BY	15%
	GE	16%
	MD	12%
	UA	14%



Արևելյան գործընկեր վեց երկրներից երկուսը՝ **Ուկրաինան** և **Հայաստանը**, հիմնել են **թվային հմտությունների և աշխատատեղերի կոալիցիաներ**:

